Առաջարկ

«Դատավորի՝ դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանները և չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել է դատավորների դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանները և չափը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

1. Նախագծի համաձայն՝ դժբախտ պատահարներից դատավորների ապահովագրության իրավական կարգավորման մեխանիզմում «ապահովագրական ռիսկ» հասկացությունը ներառում է դատավորի պաշտոնավարման ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով հաշմանդամ ճանաչվելը, իսկ «դժբախտ պատահար» հասկացությունն ընդգրկում է ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած, հիվանդության հետևանք չհանդիսացող հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), արտաքին ազդեցությամբ պայմանավորված իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է ապահովագրված անձի հաշմանդամություն: Հարցի իրավական կարգավորման նման տարբերակում փաստացի դժբախտ պատահարը չի կապվում դատավորի աշխատանքային գործունեության հետ (օրինակ՝ դատաքննության ժամանակ շենքի փլուզում, կամ դատական նիստի գնալիս դժբախտ պատահար): Այլ կերպ ասած՝ նախագծի տրամաբանության համաձայն՝ դժբախտ պատահարը կարող է կապված չլինել նաև դատավորի պաշտոնեական պարտականությունների կատարման հետ (օրինակ՝ հանգստի մեկնելիս ավտովթարի արդյունքում հաշմանդամություն): Նախագծում օգտագործվում է միայն «պաշտոնավարման ընթացքում» բառակապակցությունը, որի դեպքում դժբախտ պատահարը պաշտոնեական պարտականությունների կատարման հետ կապելու հանգամանքը խիստ մեկնաբանողական բնույթ է կրում, **ուստի կարող են առաջանալ կոռուպցիոն ռիսկեր**:

2. Նախագծին կից տեղեկանքում նշված է, որ նախագծի ընդունմամբ պետական բյուջեի վրա **էական ծախս** չի ավելանում: Նման ձևակերպումն անընդունելի է, քանի որ առաջացնում է պետական բյուջեի միջոցների ծախսման առումով **թափանցիկության խնդիր:** Այս հարցում հստակ պետք է նշվի տվյալ տարվա պետական բյուջեում ինչ ծանրաբեռնվածություն է առաջանում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ կարգի ապահովագրական պայմանագրերը կնքվում են մեկ տարով: Օրինակ՝ նախագծի հիմնավորման մեջ նշված է դատավորների ներկայիս թիվը, ուստի ֆինանսական տեղեկանքում պետք է հստակ նշվեր բյուջետային ծախսը՝ կապված ակտի կիրարկման հետ:

3. **Նախագծի ընդունմամբ առաջանում է հակասություն սոցիալական արդարության սկզբունքի մասով: Նախագծում** որևէ հիմնավորում չկա առ այն, թե դատավորի գործունեության ո՞ր ուղղությունն է համարվում առավել ռիսկային կամ վտանգավոր պետական համակարգի այլ աշխատակիցների համեմատությամբ (օրինակ՝ սահմանապահ զորքերի ծառայողների), ինչի կապակցությամբ էլ նախընտրելի է համարվել հարցի արդիականությունը: Նախագծին կից հիմնավորման մեջ այս համատեքստում հիմնավորումներ չկան, բացի այն, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ դատավորների համար նախատեսվում է դժբախտ

պատահարներից ապահովագրության իրավունք, ինչն իհարկե հիմնավորում համարել հնարավոր չէ:

Առաջարկ

Նկատի ունենալով նախագծի իրավակարգավորումներում որպես իրավահարաբերության սուբյեկտի՝ դատավորին նախատեսելու վերաբերյալ որևէ հիմնավորման բացակայությունը, **որևէ կերպ հնարավոր չէ դիտարկել նախագծի ընդունման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը, ուստի առաջարկում ենք այն հանել շրջանառությունից:** Ներկայացված առաջարկը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ինչպես արդեն նշվեց, նախագծում դժբախտ պատահար հասկացությունը կապված չէ դատավորի պարտականությունների կատարման հետ՝ **դրանով առաջացնելով կոռուպցիոն ռիսկեր,** իսկ ֆինանսական հատվածին վերաբերող տեղեկանքում ձևակերպումն առ այն, որ նախագծի ընդունմամբ պետական բյուջեի վրա **էական ծախս** չի ավելացվում, **առաջացնում է թափանցիկության հետ կապված խնդիր:**